Արձանագրություն N 3

ԾԿՏ-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով ԳՀ ընթացակարգով հայտարարված <<Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի կարիքների համար բնական սեղմված գազի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր 01 փետրվարի 2019թ.

ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Գ.Հայրապետյան
անդամ՝ Ն.Խաչատրյան
Ա.Մեսրոպյան
Վ.Հայրապետյան
Է.Հովհաննիսյան
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. **ԾԿՏ-ԳՀԱՊՁԲ-19/1 ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման մասին**

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետում <<Լարգո-Վինչ>> ՍՊԸ-ն ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.2 ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը՝

1.3 Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել **<<Լարգո-Վինչ>> ՍՊ ընկերությանը**:

1.4 Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակումից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

1.5 Սույն ընթացակարգի դեպքում անգործության ժամկետ կիրառելի չէ՝ հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հաստատման մասին

(Գ.Հայրապետյան)

Հաստատել <<**ԾԿՏ-ԳՀԱՊՁԲ-19/1**>> ծածկագրով ԳՀ ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի

նախագահ՝ Գ.Հայրապետյան

անդամներ՝ Ա.Մեսրոպյան

Ն. Խաչատրյան

Կ.Հայրապետյան

Է.Հովհաննիսյան

քարտուղար՝ Ա.Ավետիսյան